


Promoting Armenian Cause and Armenian Issues in more than **30 countries**

Հայ դատի և հայկական շահերի պաշտպանություն
աշխարհի առավել քան **30 երկրներում**



Տեղեկատու թիվ 07 (հուլիս 2024թ.) Newsletter N 07

Հայ դատի Կենտրոնական գրասենյակ



COP29-ին ընդառաջ Հայ Դատի համակարգին աշխատանքները

Նոյեմբեր 11-22, 2024-ին, Ագրպեյճանի մայրաքաղաք Բաքուի մեջ պիտի գումարուի ՄԱԿ-ի կլիմայի փոփոխութեան համաժողովը (COP29), որուն կականկալուի որ մասնակցին կառավարական հազարաւոր պատուիրակներ, լրագրողներ եւ զանազան կազմակերպութիւններու ներկայացուցիչներ: Ագրպեյճան այս համաժողովը կօգտագործէ մոլորոցներու միջազգային հանրային կարծիքը իր էութեան մասին:

Միաժամանակ, այս համաժողովը առիթ է, որ ներկայացնենք Ագրպեյճանի իսկական՝ ցեղասպանական, ռազմատենչ, ամբողջատիրական հակաժողովրդավարական էութիւնը, բարձրաձայնելով նաեւ կլիմայի փոփոխութեան մեջ Ագրպեյճանի բացասական վարքագիծի մասին:

Հայ Դատի համակարգը —յանձնախումբեր եւ գրասենեակներ— այս ուղղութեամբ նախապատրաստական աշխատանքներէ ետք արդէն սկսած են իրականացնել յատուկ մշակուած ծրագիր՝ հասնելու համար այն բոլոր շրջանակներուն՝ կառավարական, քաղաքական, հասարակական եւ լրատուական, որոնք որեւէ չափով առնչուած են COP-29-ին: Այդ աշխատանքներուն նպատակն է շեշտել արցախցիներու վերադարձի իրաւունքը, մղել նշեալ շրջանակները ազդեցութիւն բանեցնելու Ագրպեյճանի վրայ՝ պահանջելով Արցախի մէջ իր գործադրած ցեղասպանական արարքներուն, Հայաստանի Հանրապետութեան սահմաններէն ներս իր ներխուժումին, եւ հայ գերիներու անօրէն պահելու հարցերով իր հայատեաց քաղաքականութիւնը փոխել:

The activities of the Hai Tahd network (Armenian National Committees) ahead of COP29




During November 11-22, 2024, the UN Climate Change Conference (COP29) will convene in Baku, the capital of Azerbaijan, in which thousands of government delegates, journalists, and representatives of various organizations are expected to participate. Azerbaijan uses this conference to mislead international public opinion about its true nature.

At the same time, this conference is an opportunity to present the real, genocidal, belligerent, totalitarian, and anti-democratic nature of Azerbaijan, also speaking about Azerbaijan's negative behavior in climate change.

After preparatory works in this direction, the Armenian National Committees network —both committees and offices— have started to implement a specially developed program to reach all governmental, political, public, and media circles that are in any way related to COP-29. The purpose of these activities is to emphasize the right of Artsakhtsis to return, to push the mentioned circles to exert influence on Azerbaijan, demanding to change its anti-Armenian policy regarding the genocidal acts it has committed in Artsakh, its invasion of the borders of the Republic of Armenia and the illegal keeping of Armenian prisoners and hostages.

[Text Link](#)



Այսօր Ադրբեջանն ունի դեմքը փրկելու առաջադրանք, որին էլ Հայ դատի գրասենյակները հակազդում են. Գևորգ Ղուկասյան

«Հաճախ եվրոպացի շատ պաշտոնյաներ Հայ դատի հանձնախմբերին ասում են՝ դուք մեզանից ուզում եք մի բան, որ ՀՀ իշխանությունները չեն ուզում, ձեր ուզածը չի համապատասխանում ՀՀ իշխանությունների քաղաքական դիրքորոշումներին, սակայն պարտադիր չէ, որ հայկական Միությունն էթնիկ լոբբինգ անի այն, ինչ անում են ՀՀ իշխանությունները: Հայ դատի հանձնախմբերը երբեք ՀՀ իշխանության ազդեցության տակ չեն եղել», - նման համոզունք հայտնեց ՀՅԴ Բյուրոյի Հայ դատի կենտրոնական գրասենյակի հատուկ ծրագրերի պատասխանատու, քաղաքական գիտությունների թեկնածու Գևորգ Ղուկասյանը՝ պատասխանելով Yerkir.am-ի հարցին, թե՛ որքանո՞վ է ՀՀ իշխանության տանուլ տված դիվանագիտական քաղաքականությունը դժվարություններ ստեղծում Հայ դատի հանձնախմբերի ու գրասենյակների աշխատանքների, ծրագրերի իրականացման համար:

Նրա խոսքով՝ Հայ դատի հանձնախմբերի առաջնահերթությունները բխում են հայ ժողովրդի շահերից, և ՀՀ իշխանությունները հայ ժողովրդի շահերի հետ կապված ունեն սեփական պատկերացումները, որը շարունակ աղետների է հանգեցնում. «Այս մասով խանգարում են, բայց Հայաստանի իշխանություններն անցողիկ են և նրանց դիրքորոշում չի կարող պատճառ հանդիսանալ, որ Հայ դատի հանձնախմբերը փոխեն իրենց դիրքորոշումը և չսպասարկեն հայկական շահը», -ասաց Գևորգ Ղուկասյանը:

[Text Link](#)

Հայ դատի Ամերիկայի հանձնախումբ



Ամերիկայի Հայ դատի յանձնախումբը Բայդեն- Հարիսի վարչակազմին տուել է ձախողուած գնահատական Արցախեան քաղաքականութեան վերաբերեալ



Ամերիկայի Հայ դատի յանձնախումբը (ANCA) այսօր Բայդենի վարչակազմին տուել է անկումային գնահատական 2023 թուականին Ադրբեջանին՝ արցախցի հայերի ցեղասպանութեան ընթացքում զինելու, աջակցելու եւ քաջալերելու համար:

Հրաժարուելով պատասխանատուութեան ենթարկել Ալիեւի ռեժիմին իր յանցագործութիւնների համար, որեւէ իմաստալից քայլ չձեռնարկել արցախահայերի վերադարձը կամ հայ պատանդների ազատ արձակումն ապահովելու համար, եւ միայն նուազագոյն օգնութիւն ցուցաբերելով վտանգի տակ գտնուող Արցախցի փախստականներին:

Ամերիկայի Հայ դատի յանձնախումբը (ANCA) խորապէս հիասթափուած է Բայդեն-Հարիս վարչակազմից՝ վերջիններս շարունակաբար մերժել են լուրջ գործողութիւններ ձեռնարկել Ադրբեջանին պատասխանատուութեան ենթարկելու Արցախահայութեան նկատմամբ իր ցեղասպանական յարձակման համար: Անցեալ տարի, նրա լռութիւնը Արցախի բնիկ հայերի վերադարձի իրաւունքի վերաբերեալ, եւ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալութեան (USAID) անյապաղ անհրաժեշտ մարդասիրական օգնութիւնը չտրամադրելը աւելի քան 120,000 հայ փախստականներին, որոնք հարկադրուած են եղել լքել իրենց տները: 2020 թուականի Արցախեան պատերազմի ժամանակ Բայդեն-Հարիս արշաւը մեծ խոստումներ է տուել ամերիկահայ համայնքին՝ խոստանալով արգելել ԱՄՆ ռազմական օգնութիւնը Ադրբեջանին:

[Text Link](#)



ANCA Gives Biden-Harris Administration Failing Grade on Artsakh Policy

The Armenian National Committee of America (ANCA) today gave the Biden Administration a

failing grade for arming, abetting, and

emboldening Azerbaijan's 2023 genocide of Artsakh's indigenous Armenians, refusing to hold the Aliyev regime accountable for its crimes, undertaking no meaningful steps to secure the return of Artsakh Armenians or the release of Armenian hostages, and providing only minimal assistance to at-risk Artsakh refugees. The ANCA statement is below.

ANCA Statement on the Biden Administration's Failure to Address Azerbaijan's Genocide of Artsakh

The Armenian National Committee of America (ANCA) is profoundly disappointed by the Biden-Harris Administration for their continued refusal to take meaningful action to hold Azerbaijan accountable for its genocidal assault on Artsakh (Nagorno-Karabakh) last year, its silence on the right of return for the indigenous Armenians of Artsakh, and the U.S. Agency for International Development's (USAID) failure to provide urgently needed humanitarian assistance to the over 120,000 Armenian refugees forced from their homes.

During the 2020 Artsakh War, the Biden-Harris campaign made lofty promises to the Armenian American community – pledging to prohibit U.S. military assistance to Azerbaijan. Just months later, the Biden Administration reneged on that commitment – and, in a callous act of betrayal, announced the reauthorization of security assistance to Azerbaijan just a day before recognizing the Armenian Genocide. The Biden-Harris Administration again reauthorized military assistance to Azerbaijan in 2022, even in the wake of Azerbaijan's widely documented human rights violations and incursion into the sovereign territory of the Republic of Armenia – sending a clear signal to the despotic Aliyev regime that it would face no consequences for its authoritarian aggression.

[Text Link](#)

Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի վարժողական ծրագրի մասնակիցները հանդիպել են ԱՄՆ Կոնգրեսի ավելի քան 400



գրասենյակների աշխատակիցների հետ

Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի «Լեո Սարգսյան» և «Մարալ Մելքոնյան-Ավետիսյան» կրթական ծրագրերի երիտասարդները ԱՄՆ Կոնգրեսում երկու օրվա ընթացքում հանդիպել և հայկական հիմնախնդիրների վերաբերյալ իրազեկել են Կոնգրեսի ավելի քան 400 գրասենյակների աշխատակիցների: Քարոզչական բնույթի այս արշավի կիզակետում է եղել Ադրբեջանի կողմից ապօրինաբար կալանավորված և խոշտանգված հայ բանտարկյալների խնդրի ներկայացումը և Կոնգրեսում ադրբեջանական լոբբին հակազդումը: Հայ դատի հանձնախմբի երիտասարդները կրում էին վերնաշապիկներ, որոնց վրա պատկերված էին Ադրբեջանի կողմից ապօրինի բանտարկված Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության լուսանկարները՝ այդպիսով ուշադրություն հրավիրելով ընդհանուր առմամբ հայտնի քսաներեք գերեզմանաված անձանց ազատ արձակման խնդրին: Երիտասարդները ԱՄՆ օրենսդիրներին կոչ են արել ձեռնարկել անմիջական գործողություններ՝ ապահովելու հայ գերիների անհապաղ ազատ արձակումը, ինչպես նաև ներքին օրենսդրության կիրառմամբ պատասխանատվության ենթարկելու Ադրբեջանին ռազմական հանցագործությունների համար:



ANCA Leads Full Court Press across Capitol Hill for Release of Armenian Prisoners

The Armenian National Committee of America (ANCA) Leo Sarkisian interns and Maral

Melkonyan Avetisyan fellows spotlighted the plight of Armenian prisoners illegally detained and tortured by Azerbaijan, countering Azerbaijani efforts to cover up their genocidal ethnic cleansing of Artsakh, during a two-day Capitol Hill campaign that educated more than four hundred Congressional offices.

The ANCA youth advocates took a bold stand, wearing shirts depicting the photos of the Artsakh leaders illegally imprisoned by Azerbaijan, calling attention to the twenty-three known Armenian hostages captured following the 2020 Azerbaijan/Turkey war against Armenia/Artsakh and the 2023 genocidal ethnic cleansing of Artsakh. The interns called for direct U.S. action to secure the immediate release of the Armenian hostages and encouraged passage of key legislation, which calls on the U.S. government to hold Azerbaijan accountable for its war crimes.

[Text Link](#)

ԱՄՆ Կոնգրեսի հայկական հարցերով խումբը պահանջում է ՆԱՏՕ-ի գազաթափողովի ընթացքում պատասխանատվության ենթարկել Ադրբեջանին



Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը ողջունում է ԱՄՆ Կոնգրեսի հայկական հանձնախմբի համանախագահներ՝ Ֆրենք Փալոունի, Գուս Բիլիրակիսի, Ադամ Շիֆի և Դեյվիդ Վալադաոյի համատեղ հայտարարությունը, որով Բայդենի վարչակազմին կոչ է արվում պատասխանատվության ենթարկել Ադրբեջանին Արցախի էթնիկ զտումների համար, նպաստել Արցախի հայերի վերադարձին և ադրբեջանական շարունակական ագրեսիայի պայմաններում աջակցել Հայաստանի ինքնիշխանությանը:

Մեկնաբանելով կոնգրեսականների նախաձեռնությունը՝ Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի Վաշինգտոնի գրասենյակի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը նկատել է. «Մեր համայնքը, կոալիցիոն գործընկերները և Կոնգրեսի դաշնակիցները միավորված են Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու իր ռազմական հանցագործությունների համար՝ սկսած Ալիևի կողմից Արցախի էթնիկ զտումից և քրիստոնեական սրբավայրերի ոչնչացումից մինչև Հայաստանի տարածքի շարունակական օկուպացիան և հայ գերիների ապօրինի կալանավորումն ու բռնությունը: Նախագահ Բայդենը, ով զինեց Ադրբեջանի կողմից Արցախի ցեղասպանությունը, այժմ պետք է ղեկավարի Արցախի հայերի անվտանգ և կայուն վերադարձի գլոբալ արշավը՝ միջազգային մանդատի ներքո, պաշտպանված միջազգային խաղաղապահների կողմից»:



Congressional Armenian Caucus Co-Chairs Call on Biden to Hold Azerbaijan Accountable for Artsakh War Crimes at NATO Summit

The Armenian National Committee of America (ANCA) welcomed a joint statement by Congressional Armenian Caucus Co-Chairs Rep. Frank Pallone (D-NJ), Rep. Gus Bilirakis (R-FL), Rep. Adam Schiff (D-CA), and Rep. David Valadao (R-CA), calling on the Biden Administration to hold Azerbaijan accountable for its ethnic cleansing of Artsakh, facilitate the return of Armenians to Artsakh, and support Armenia's sovereignty in the face of ongoing Azerbaijani aggression.

"Our community, coalition partners, and Congressional allies are united in holding Azerbaijan accountable for its war crimes – from Aliyev's ethnic cleansing of Artsakh and destruction of Christian holy sites to his ongoing occupation of Armenian territory and illegal detention and abuse of Armenian prisoners," said ANCA Executive Director Aram Hamparian. "President Biden – having armed Azerbaijan's genocide of Artsakh – must now lead a global campaign for the safe and sustainable return of Armenians of Artsakh – under an international mandate, protected by international peacekeepers." The Congressional Armenian Caucus statement, which coincides with the opening of the NATO Summit in Washington, DC, this week, calls on the Biden Administration to "ensure Azerbaijan faces consequences for its actions and is not rewarded for war crimes, human rights abuses, and the ethnic cleansing of over 120,000 Armenians from Nagorno-Karabakh."

[Text Link](#)

Հայ դատի Եվրոպայի գրասենյակ



ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի ներկայացուցիչ Իշխան Սաղաթելյանն ավարտել է աշխատանքային այցը Բելգիա և Նիդերլանդներ

ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի ներկայացուցիչ Իշխան Սաղաթելյանը հուլիսի 21-25-ը աշխատանքային այցով գտնվել է Բելգիայի Թագավորությունում, ապա մինչև հուլիսի 27՝ Նիդերլանդների Թագավորությունում:

ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակի կազմակերպմամբ՝ Իշխան Սաղաթելյանը հանդիպել է Եվրոպական միության օրենսդիր և գործադիր իշխանությունների, Բելգիայի դաշնային խորհրդարանի, դրա երկու պալատների, ինչպես նաև Եվրոպական սոցիալիստների կուսակցության բարձրաստիճան ներկայացուցիչների հետ:

Մասնավորապես, Եվրոպական խորհրդարանում հանդիպումներ են անցկացվել Եվրոպական խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի առաջին փոխնախագահ Հանս Ժալուլ Մուրոյի, Եվրոպական խորհրդարանի

սոցիալ-դեմոկրատական քաղաքական խմբի փոխնախագահ Յանիս Մանյատիսի և նույն քաղաքական խմբի Բյուրոյի անդամ Էրո Հայնալուոմայի, Հայաստանի հետ բարեկամության խմբի նախագահ, Եվրոպայի ժողովրդական կուսակցության քաղաքական խմբի անդամ Լուկաս Ֆուրլասի, Սոցիալ-դեմոկրատական քաղաքական խմբի անդամ Կոստաս Մավրիդեսի, Եվրոպայի պահպանողականների և կոնսերվատիվների քաղաքական խմբի անդամ Զարի Վայմերսի:

[Text Link](#)

Հայ դատի Լիբանանի հանձնախումբ



ՀՅԴ Լիբանանի Հայ Դատի Մարմինը Օրպանի Շուշի Այցելության Եւ Կատարած Ցայտարարության

Վերաբերեալ Նամակներ Յղեց Լիբանանի Մէջ Եւրոպական Միութեան Ու Անոր Անդամ Երկիրներու Դեսպաններուն

ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը Հունգարիոյ վարչապետ Վիլթոր Օրպանի բռնագրաւեալ Շուշիի մէջ Թրքական պետութիւններու կազմակերպութեան ոչ պաշտօնական վեհաժողովին մասնակցութեան ու արտասանած խօսքին վերաբերեալ նամակներ յղեց Լիբանանի մէջ Եւրոպական Միութեան ու միութեան անդամ 15 երկիրներու՝ Գերմանիոյ, Ֆրանսայի, Սպանիոյ, Շուէտի, Չեխիոյ, Պելճիքայի, Դանիոյ, Նետերլանտներու, Աւստրիոյ, Յունաստանի, Կիպրոսի, Իտալիոյ, Պուլկարիոյ, Լեհաստանի եւ Մալթայի դեսպաններուն: Հայ դատի մարմինը դեսպաններուն ուշադրութեան յանձնեց, որ Օրպանի բռնագրաւուած Արցախի Հանրապետութեան մէջ բռնագրաւուած հիւսիսային Կիպրոսի ղեկավարի կողքին վեհաժողովի մասնակցութիւնը «ուժի կիրարկման ու բռնագրաւման եւ անոնց ապօրինի հետեւանքին յստակ օրինականացումն է»: Անդրադառնալով վեհաժողովի ընթացքին Հունգարիոյ վարչապետին արտասանած խօսքին, որուն մէջ ան «բացարձակ յարգանք» յայտնած էր Ագրայէճանի նախագահ Իլիամ Ալիեւին՝ «այս շրջանի հազարաւոր մարդոց խաղաղութեան մէջ ապրելու առիթ ընծայելուն համար», եւ յոյս յայտնած, որ «այսպիսի առիթ մը նաեւ կարելի եղածին չափ շուտ Եւրոպայի մէջ եւս կապահովուի», Հայ դատի մարմինը նշեց. «Եւրոպական Միութեան անդամ երկրի մը վարչապետը «բացարձակ յարգանք» կը յայտնէ բռնատէրի մը, որուն մարդու իրաւունքներու նկատմամբ վերաբերմունքը շատ յստակ է, եւ միայն վերջերս մարդկութեան դէմ ոճիր գործած է: Այն, ինչ որ այս յայտարարութիւնը առաւել գայթակղեցնող կը դարձնէ, այն իրողութիւնն է, որ Հունգարիան ներկայիս Եւրոպական Միութեան խորհուրդի 6-ամսեայ նախագահութիւնը կը վարէ:

[Text Link](#)

Հայ դատի Ավստրալիայի հանձնախումբ



Armenian National Committee of Australia to Host Second Junior Advocates Program

The Armenian National Committee of Australia (ANC-AU) has announced the commencement of applications for the second iteration of the ANC-AU Junior Advocates Program, scheduled to take place in Canberra on August 11th and 12th, 2024.

This unique initiative, established in 2023, aims to inspire Armenian-Australian Year 11 students to explore careers in politics and related fields through immersive experiences in Canberra, Australia's capital.

The ANC-AU Junior Advocates Program offers participants an exclusive opportunity to engage in hands-on workshops and mock exercises, providing insights into the workings of the Australian Federal Parliament.

Participants will embark on a two-day journey alongside fellow students, supervised by ANC-AU National Office and Board members, as well as the staff at Galstaun College. Highlights of the program include job shadowing sessions with parliamentary staffers, first-hand accounts from elected representatives, and the chance to witness Parliamentary Question Time.

In addition, participants will also take part in 'My Voice, My Choice', where they will deliver a 90-second Private Member's Statement on a topic of personal importance in the Old Parliament House chambers. This exercise aims to cultivate public speaking skills and encourage thoughtful engagement with issues affecting our communities.

[Text Link](#)



Հայ դատի Կենտրոնական խորհուրդ | +374-10-52-19-66 | www.ancnews.info



Armenian Cause Foundation | Mkher Mkrtchyan 12/1 | Yerevan, 0010 AM

[Unsubscribe](#) | [Update Profile](#) | [Constant Contact Data Notice](#)



Try email marketing for free today!